ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 փետրվարի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

27
(2693)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՇՈՒՆՉՆԵՐԸ ՊԱՀԱԾ ՍՊԱՍՈՒՄ ԵՆ

Արցախում այսօր շրջադարձային իրադարձություններ են սպասվում. բոլորը շունչները պահած սպասում են Արցախի նախագահի այսօրվա ուղերձին:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ԱՀ նախագահն իր ուղերձը հրապարակելու է կեսօրից հետո ֆեյսբուքյան իր էջում: Նշենք, որ այսօր Արցախի ԱԺ-ն նիստ է գումարելու, Արայիկ Հարությունյանին առաջարկել են գալ խորհրդարան եւ ԱԺ ամբիոնից ուղերձը հնչեցնել, սակայն վերջինս հրաժարվել է՝ նախընտրելով ուղերձով հանդես գալ ֆեյսբուքյան իր էջում:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացրել էր, որ Հարությունյանն իր ուղերձում պատրաստվում է հայտարարել պետնախարար Ռուբեն Վարդանյանին աշխատանքից ազատելու մասին: Հայտնել էինք նաեւ, որ Արցախի պետնախարարի նոր թեկնածուն գլխավոր դատախազ Գուրգեն Ներսիսյանն է, որն, ի դեպ, հաստատել է արդեն, որ նախագահից նման առաջարկ ստացել է: Տեղեկացանք նաեւ, որ ԱՀ նախագահն իր ուղերձում հայտարարելու է նախագահին կից խորհրդատվական մարմին ստեղծելու մասին, որը, ամենայն հավանականությամբ, ղեկավարելու է Արցախում ընդդիմադիր քաղաքական գործիչ ներկայացող Տիգրան Պետրոսյանը:

Արցախում վստահ են, որ Արայիկ Հարությունյանը փորձելու է ամեն կերպ արդարացնել իր՝ Ռուբեն Վարդանյանին պաշտոնից հեռացնելու որոշումը, ներկայացնելու է, թե դա Արցախում ներքաղաքական կյանքը հանդարտեցնելու համար է անում, մինչդեռ Արցախում ընդդիմադիրները վստահ են, որ նա դա անում է հենց Փաշինյանի պահանջը բավարարելու համար: Արցախի մեր աղբյուրները հայտնեցին, որ Ռուբեն Վարդանյանը պետնախարարի պաշտոնից հետո որեւէ նոր պաշտոնի մտադիր չէ անցնել, բայց շարունակելու է մնալ Արցախում:

Արցախի խորհրդարանական ընդդիմությունն էլ իր հերթին սպասում է Արայիկ Հարությունյանի այսօրվա ուղերձին, որպեսզի, դրանից ելնելով, քայլեր ձեռնարկի:



Կառավարությունը երեկ «Լիդիան» ընկերության հետ 250 միլիոն դոլար արժեքով փաթեթ է ստորագրել: Երեկ խորհրդարանում լրագրողների հետ զրույցում ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը հայտարարեց, թե Ամուլսարի հանքը շուտով կշահագործվի: Նկատենք, որ «Լիդիան Արմենիա» ընկերությունը, կարելի է ասել, այս ժամանակահատվածում ոչինչ չի արել, որպեսզի հանքը շահագործվի, այլ իշխանություններն են ամեն քայլի դիմել, որպեզի փաստաթղթեր ստորագրեն՝ հանքը շահագործելու համար: Բանն այն է, որ իշխանությունը փորձում է գումար հավաքել՝ցույց տալու համար, որ այսպես բյուջե են լցնում եւ եկամուտներ ապահովում: Գաղտնիք չէ՝ Ամուլսարի հանքի շահագործման հարցը նախկինում դժգոհություններ էր առաջացրել նաեւ Ջերմուկի բնակիչների շրջանում: Հիմա, Ամուլսարի հանքը շահագործելով, նաեւ ցանկանում են ակտիվացնել Ջերմուկում կյանքը, ցույց տալ, թե այնտեղ ամեն ինչ լավ է, բայց իրականում այնտեղ մարդիկ քիչ են, գրեթե դատարկ է քաղաքը: Այսպես փորձելու են ցույց տալ, թե Ջերմուկում կյանքն են ակտիվացնում եւ հետն էլ 250 մլն բյուջե են լցնում:



ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը կրկին մնացել է առանց փոխնախարարի: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ դեռ փետրվարի 6-ին Արմեն Արզումանյանը, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրամանով, ազատվել էր էկոնոմիկայի նախարարի տեղակալի պաշտոնից: Այս մասով «Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել: Մասնավորապես, տեղեկացանք, որ ոչ թե Արմեն Արզումանյանն է ցանկություն հայտնել հեռանալ, այլ նրան ազատել են պաշտոնից: Մեր աղբյուրները հայտնում են, որ իրականում նախարարությունում դժգոհ են եղել Արմեն Արզումանյանի աշխատանքից, որն այդ պաշտոնում նշանակվել էր 2022 թվականի ապրիլին, այսինքն՝ անգամ մեկ տարի չաշխատեց այդ պաշտոնում: Գալով պաշտոնի եւ խոստումներ տալով՝նա, փաստորեն, չի կարողացել իրականացնել դրանք, ինչն էլ այդպիսի դժգոհության պատճառ է հանդիսացել: Տեղեկացանք նաեւ, որ մինչ այս պահը նրան դեռ փոխարինող չի նշանակվել, եւ նախարարությունում այնպիսի տրամադրություններ են, որ առաջիկայում այդ հաստիքը չի էլ համալրվի, եւ նրա գործառույթները կկատարեն նախարարի մյուս տեղակալները: Նկատենք՝ «Ժողովուրդ» օրաթերթն այդպիսի վիճակագրություն էր ներկայացրել եւ գրել, որ նախարարություններում կադրային ճգնաժամ է, մի քանի գերատեսչություններում նախարարի տեղակալներ չկան: Փաստորեն, նրանց ավելացավ եւս մեկը: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց նաեւ Արմեն Արզումանյանին՝հասկանալու համար, թե ինչու է նման որոշում կայացվել, սակայն մեր հարցերը մնացին անպատասխան:

Երեկ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների օգնականները կարողացել են հասնել իրենց երկրորդ նպատակին: Մանրամասնել էինք, որ ԱԺ աշխատակազմի ղեկավար-քարտուղար Դավիթ Առաքելյանը որոշում է կայացրել պատգամավորների օգնականներին պարգեւատրել աշխատավարձի 15 տոկոսի չափով: Եվ, ահա, մեր այս հրապարակումից հետո Ազգային ժողովի լրատվության վարչությունը պաշտոնական հաղորդագրությամբ եւ սոցիալական ցանցի իրենց էջում շտապեց հայտարարություն տարածել՝փորձելով հերքել անհերքելին: Սկզբում դրեցին տեքստ, ինչից պարզ չէր՝ինչ են ուզում.««Ժողովուրդ» օրաթերթի հրապարակումն իրականությանը չի համապատասխանում»: Ու պարզ չէր՝ ըստ ԱԺ-ի՝ի վերջո, հրապարակումն իրականությանը համապատասխանում է, թե չի համապատասխանում: Իսկ ի՞նչն են հերքում. եթե կարճ, ապա՝ անհերքելին: Գրել են, թե պատգամավորների օգնականները պարգեւավճար չեն ստացել, եւ մեր լուրը չի համապատասխանում իրականությանը, ապա երկու նախադասություն անց արդարացել, թե ԱԺ աշխատակազմը, այդ թվում՝ բոլոր պատգամավորների օգնականները, յուրաքանչյուր ամիս, աշխատավարձից բացի, ստանում են նաեւ պարգեւավճար՝ աշխատավարձի 15 տոկոսի չափով: Այսինքն՝հերքման տեքստում ԱԺ-ն հաստատել է այն, ինչ հրապարակել էր «Ժողովուրդ» օրաթերթը. օգնականները 15% պարգեւավճար են ստացել: Թե ինչ էր շտապում վաղ առավոտյան այդպես փութաջանորեն հերքել Ազգային ժողովը, մնաց անհասկանալի:

ԴԱՏԵԼ

ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԸ ԼՈՒԾՎԵԼՈՒ Է

Արցախում ստեղծված անվտանգային իրավիճակի եւ ներքաղաքական լարված իրավիճակի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ՊՆ նախկին փոխնախարար Արտակ Զաքարյանի հետ:

-Պարոն Զաքարյան, երեկ Ադրբեջանը խախտել է հրադադարն Արցախում: Ստացվում է՝ թշնամին ոչ միայն 2 ամսից ավելի է՝ շրջափակման մեջ է պահում Արցախի մեր հայրենակիցներին, ահաբեկում է նրանց, այլ նաեւ կրակում է սահմանների ուղղությամբ: Ինչպե՞ս կգնահատեք այս իրավիճակը, ի՞նչ հանգուցալուծում եք տեսնում այս ճգնաժամի:

-Խնդրի հանգուցալուծումը մեկն է՝ այս իշխանություններին հեռացնել եւ պատասխանատվության ենթարկել գործած բազմաթիվ մեղքերի համար, իսկ գնահատականը հետեւյալն է. Ադրբեջանը չի պատրաստվում գնալ խաղաղության, նրա ցանկացած խաղաղասիրական կոչ զուտ միջազգային հանրության աչքերին թոզ փչելու համար է: Եվ Արցախի շրջափակումը, ե՛ւ սահմանին հրադադարի խախտումը ե՛ւ Հայաստանի տարածքների օկուպացումը խոսում է այն մասին, որ պատերազմից դեպի խաղաղություն կամ խաղաղությունից դեպի պատերազմ մեկ քայլ է: Պատերազմի բոլոր հնարավոր վտանգները չեզոքացնելու համար Հայաստանին անհրաժեշտ է արտաքին քաղաքական ճիշտ դիրքավորումը, ինչը պետք է բխի Հայաստանի շահերից, բայց Հայաստանի ասօրվա իշխանությունները դիրքավորվում են այնպես, ինչպես ձեռնտու է մեր թշնամիներին կամ էլ արեւմտյան մի քանի գործընկերների, որպեսզի տարածաշրջանում լուծեն ոչ թե Հայաստանի, այլ բոլորովին ուրիշ երկրների շահերից բխող հարցեր: Այդ ընթացքում Հայաստանը մի հատ էլ պատերազմի մեջ կընկնի, մի հատ էլ կոտորած կապրի, բայց դա ոչ մեկին չի հետաքրքրում, չի հետաքրքրում նաեւ Փաշինյանին: Լուծումը մեկն է՝ այս իշխանություններին հեռացնել եւ դատել, իրենք պետք է գործած բազմաթիվ հանցանքների համար պատասխանատվության ենթարկվեն:

-Պարոն Զաքարյան, անվտանգային այս լարված իրավիճակում Արցախում քաղաքական լուրջ գործընթացներ են տեղի ունենում: Նախագահ Արայիկ Հարությունյանն է սահմանադրական փոփոխությունների գործընթաց սկսել. ինչպես մամուլն է գրել, նա պատրաստվում է նաեւ աշխատանքից ազատել Արցախի պետնախարար Ռուբեն Վարդանյանին: Ներքաղաքական այս զարգացումներն ինչի՞ կարող են հանգեցնել:

-Նիկոլ Փաշինյանը վտանգ է տեսնում Ռուբեն Վարդանյանից, հիմա էլ Ալիեւի ձեռքով ուզում է հեռացնել նրան: Մենք որ ասում ենք՝ Նիկոլն ու Ալիեւը նույն դրամի երեսներն են, նույն խաղն են խաղում՝ ի վնաս հայ ժողովրդի, ակնհայտ է: Արցախի իշխանություններն էլ վաղուց հատել են բոլոր կարմիր գծերը, կորցրել են իրենց ինքնությունը, սեփական դիմագիծը, բայց Արցախի ժողովուրդը պայքարում է: Եթե Արցախում չկարողանան ճիշտ կողմնորոշվել ու ներքին խնդիրները լուծել՝ բացառապես Արցախի շահերից ելնելով, ոչ թե լսելով կապիտուլացված Երեւանին կամ տրվելով Ալիեւի շանտաժներին, դա կնշանակի, որ Արցախի հարցը լողզվելու է աշխարհաքաղաքական այս զարգացումների մեջ, եւ Արցախը չի ունենալու հստակ ձեւակերպված շահ: Ի՞նչ է նշանակում՝ Ալիեւն ասել է՝ Ռուբեն Վարդանյանին հեռացրե՛ք, որ ճանապարհը բացեմ. վաղն էլ կասեն՝ Ալիեւն ասում է՝ Արայիկ Հարությունյանի «ականջները կտրե՛ք», որ ճանապարհը բացեմ. անելո՞ ենք այսպես, չի կարելի, չէ՞, այսպես:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ

ԱՄՈՒԼՍԱՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ամուլսարի ոսկու հանքավայրը կվերսկսի շահագործումը:

Ազգային ժողովում ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը հայտարարեց, որ Հայաստանն այսօր 250 միլիոն դոլարանոց փաթեթ է ստորագրելու «Լիդիան Արմենիա» ընկերության հետ, որին պատկանում է Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման լիցենզիան:

ՀՀ կառավարության, Եվրասիական զարգացման բանկի եւ «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության միջեւ կստորագրվի Եռակողմ փոխըմբռնման հուշագիր: ՀՀ կառավարության կողմից փաստաթուղթը կստորագրի ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը:

ArmLur.am-ը այս առիթով զրուցել է ԱԺ նախկին պատգամավոր Գայանե Աբրահամյանի հետ, որը պարբերաբար դեմ է արտահայտվել հանքի շահագործմանը:

-Տիկին Աբրահամյան, այսօր հայտնի դարձավ, որ, չնայած շատ դժգոհություններին, Ամուլսարի հանքը կրկին կշահագործվի. ի՞նչ կասեք այս մասին:

-Որեւէ կերպ չեմ պատկերացնում, թե ինչն է փոխվել, որ հիմա վտանգները կարող են չեզոքացված համարվել, եւ թույլատրվի այս հանքի շահագործումը:

Շատ լավ ծանոթ լինելով Էլարդի զեկույցին, որտեղ մանրամասն ներկայացված էին այս հանքի շահագործման հետեւանքով առաջացած բոլոր հիմնական վտանգները, բացարձակ անընդունելի է այս որոշումը, բացարձակ արդարացված չէ, եւ սա միայն այսօրվա խնդիր չի լինելու, սա տասնամյակներով կարող է վնասել ողջ պետությանը, հատկապես՝ երկրաշարժերի այսպիսի ակտիվ գոտում եւ ակտիվ շրջանում գտնվելով:

Պետությունը դեռեւս չունի եղած հանքերի ու պոչամբարների վնասներն ու հնարավոր աղետները կանխելու ծրագրեր, իսկ այս նոր հանքի դեպքում, որը կարող է սպառնալ միակ, ամենամեծ ջրային ռեսուրսի՝ Սեւանի աղտոտմանը, հնարավոր հետեւանքները կառավարելու նվազագույն կարողությունն անգամ չկա:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՉԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի ծեծի գործով երեկ կալանավորված անձը չի ընդունում մեղադրանքը: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ նա ԱԱԾ-ում ցուցմունք է տվել եւ հայտնել , որ ինքը եղել է այնտեղ, բայց Արարատ Միրզոյանին չի հարվածել: Ստացվում է, որ աղմկահարույց միջադեպից երեք տարի անց երկու անձ է կալանավորվել, եւ երկուսն էլ չեն ընդունում մեղադրանքը, որ ծեծել են Արարատ Միրզոյանին: Ավելին՝ չկա նաեւ ծեծի ապացույց տեսանյութ: Հիշեցնենք, որ երեկ ԱԱԾ-Ն հայտնեց, որ Թ. Ա.-ն, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի եւ, դրանով պայմանավորված, նույն օրը՝ Հայաստանի Հանրապետությունում եւ Արցախի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության պայմաններում 2020 թվականի նոյեմբերի 10-ին պատերազմը դադարեցնելու եւ Արցախի Հանրապետության վերահսկողության ներքո գտնվող մի շարք տարածքներ Ադրբեջանի Հանրապետության վերահսկողությանը հանձնելու մասին Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ ձեռք բերված համաձայնության վերաբերյալ հայտարարությունը զանգվածային լրատվության միջոցներում հրապարակվելուց հետո, տեղեկանալով, որ մայրաքաղաք Երեւանում գտնվող ՀՀ կառավարության, Ազգային ժողովի վարչական շենքերի եւ ՀՀ վարչապետին հատկացված կեցավայրի մոտ, դրանց ներսում զանգվածային անկարգություններ են կատարվում, դրանց մասնակցելու նպատակով գնացել է Երեւան քաղաքի Դեմիրճյան եւ Պռոշյան փողոցների խաչմերուկ, որտեղ էլ, տեսնելով, որ ավտոմեքենայում խցանման մեջ է գտնվում ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանը, տեղում միացել ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի նկատմամբ բռնություն գործադրող զանգվածային անկարգությունների մասնակիցներին, ճեղքելով վերջիններիս շարքերը՝ մոտեցել է արդեն իսկ գետնին ընկած Արարատ Միրզոյանին եւ վերջինիս պետական գործունեությունը դադարեցնելու նպատակով, նրան սպանելու դիտավորությամբ այլոց հետ միասին ոտքերով հարվածներ է հասցրել Արարատ Միրզոյանի գլխին եւ մարմնի տարբեր մասերին, ինչի հետեւանքով վերջինիս պատճառվել է դիմային գանգի ոսկրերի բազմակի կոտրվածքներ եւ այլ մարմնական վնասվածքներ, եւ Արարատ Միրզոյանը կորցրել է գիտակցությունը:

Մյուս կալանավորվածը Արա Բ.-ն է:

ՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՏՐԱՍՏ Է

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը որոշումներ է կայացրել ԱԺ պատգամավորներից մի քանիսի նկատմամբ հարուցված վարույթներով: Մասնավորապես, մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ խախտում չի հայտնաբերվել «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Նազարյանի եւ ՔՊ -ական պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի դեմ հարուցված վարույթներով: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ վարույթներ էին հարուցվել Ազգային ժողովի ՔՊ-ական, ինչպես նաեւ «Հայաստան» խմբակցության մի քանի պատգամավորների նկատմամբ՝ «անհամատեղելիության պահանջի առերեւույթ խախտման» հիմքով: Գրել էինք, որ պատգամավորները ստացել էին հանձնաժողովի ծանուցումները, որ իրենց դեմ վարույթ կա:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՑ

Մյունխենում Ադրբեջանի նախագահի եւ ԱՄՆ պետքարտուղարի հետ հանդիպումից վերադառնալուց հետո Նիկոլ Փաշինյանը երեկ ՔՊ գրասենյակում հանդիպել է իր թիմակիցների հետ:

Ըստ կուսակցության տարածած պաշտոնական հաղորդագրության՝ քննարկվել են Գյումրու ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության աշխատանքների հետ կապված հարցեր: Ընդունվել է ՏԻՄ ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու թեկնածուների ընտրական ցուցակների հաստատման նոր կարգը:

Քննարկվել են նաեւ Մալաթիա-Սեբաստիա տարածքային կազմակերպության աշխատանքների հետ կապված ընթացիկ եւ կարգապահական բնույթի հարցեր:

ArmLur.am-ին նոր մանրամասներ են հայտնի դարձել Նիկոլ Փաշինյանի եւ ՔՊ-ականների փակ հանդիպումից: Տեղեկացանք, որ քննարկումը բավականին երկար է տեւել՝ մոտ 4 ժամ:

Հանդիպման հիմնական օրակարգը եղել է Փաշինյան-Ալիեւ մյունխենյան հանդիպումը: Նիկոլ Փաշինյանն իր թիմակիցներին մանրամասներ է ներկայացրել հանդիպումից: Նա, մասնավորապես, նշել է, որ թեեւ հստակ պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել, բայց բավականին արդյունավետ է համարում մյունխենյան հանդիպումը:

Թիմակիցները նրանից հետաքրքրվել են, թե խաղաղության պայմանագրի մասով բանակցություններում ինչ առաջընթաց կա, ինչ նոր պայմանավորվածություններ են ձեռք բերվել Մյունխենում, Փաշինյանն էլ ասել է, որ քննարկումները դրա կետերի շուրջ դեռ շարունակվում են, դեռ որեւէ հստակություն չկա:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ԱՃՈՒՐԴՈՎ

Քանաքեռ-Զեյթուն Ծարավ Աղբյուրի փողոց 64 շինություն հասցեում գտնվող 1 332,72 քառ. մետր մակերեսով շենք-շինությունները, որոնք 4-րդ աստիճանի վթարային են, եւ դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար հատկացված 0.15116 հեկտար մակերեսով հողամասը հանվելու են աճուրդի: ArmLur.am-ը տեղեկացավ, որ անշարժ գույքի արժեքը գնահատվում է 85 մլն 250 հազար դրամ, եւ մրցույթի օտարման գինը եւս այդքան է կազմելու:

Մրցույթին մասնակցելու նախավճարը կազմելու է գույքի վաճառքի նվազագույն գնի 5 տոկոսի չափով՝ 4 մլն 262 հազար դրամ, որը մրցույթի հաղթող ճանաչված մասնակցի համար համարվում է գույքի վաճառքի գնի մաս եւ գնորդի կողմից հետագա վճարումները կատարելուց հրաժարվելու դեպքում վերադարձման ենթակա չէ ու փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Աճուրդին մասնակցելու համար մի քանի պայման է գործում. օրինակ՝ գույքի օտարման նպատակով առաջարկվող ներդրումների չափը պետք է ներկայացվի ըստ տարիների եւ չի կարող գերազանցել հինգ տարին:

ԲԱՆԱԿՑՎԱԾ

ԱՆՑԱԿԵՏ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԻ՞Ն

«Ի սկզբանե, երբ մենք նախաձեռնում էինք խաղաղության պայմանագրի շուրջ բանակցություններ սկսել Ադրբեջանի հետ, եղավ պայմանավորվածություն այդ բանակցությունները վարել երկու հիմնական ուղղություններով՝ մեկը՝ ՀՀ-ի ու Ադրբեջանի միջեւ հարաբերությունների հաստատման կամ, կարճ ասած, խաղաղության պայմանագրի շուրջ, եւ մյուսը՝ այն հարթակի ստեղծման շուրջ, որում պետք է ճնարավի ԼՂ-ում բնակվող հայության անվտանգությունը»,- ՀՀ եւ Լյուքսեմբուրգի ԱԳ նախարարների համատեղ ասուլիսում ասաց ՀՀ արտգործնախարար Արարատ Միրզոյանը:

«Տեւական ժամանակ է՝ մենք տեսնում ենք, որ Ադրբեջանը խուսանավում է այս խոսակցության մեջ ներգրավվելուց: Մյունխենում ոչ միայն պանելային քննարկման ընթացքում, այլ նաեւ Բլիքնեն-Ալիեւ-Փաշինյան քննարկումների ընթացքում հայկական կողմը ստացել է Ադրբեջանի պատրաստակամությունը, որ Բաքվի եւ Ստեփանակերտի միջեւ երկխոսությունը պետք է տեղի ունենա: Մյուս կողմից՝ վերջին տարիներին մենք տեսել ենք նահանջ ձեռք բերված պայմանավորվածություններից, հուսամ՝ այս անգամ այդ դեպքը չի լինի, ու նույն վարքագիծը չենք տեսնի»,- ասաց Արարատ Միրզոյանը: Լաչինի միջանցքի կարգավորումները բանակցված ու արտացոլված են նոյեմբերի 9-ի փաստաթղթում, միջանցքի կարգավորումների վերաբանակցումը, ընդ որում՝ կրկին ուժի գործադրման արդյունքում եւ նոր ուժի գործադրման սպառնալիքով, հայկական կողմի համար չի կարող ընդունելի լուծում լինել: Այս մասին ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հայտարարեց Լյուքսեմբուրգի ԱԳ նախարարի հետ համատեղ ասուլիսում՝ անդրադառնալով Մյունխենի հանդիպումից հետո Ադրբեջանի նախագահի հայտարարությանը, թե հայկական կողմին առաջարկել են, որ Զանգեզուրի միջանցքի սկզբում ու վերջում, նաեւ Լաչինի ու Հայաստանի միջեւ անցակետեր պետք է լինեն: «Իսկապես այդպիսի գաղափար հնչեցվել է՝ անցակետեր դնել Հայաստանի սահմանին եւ հատվածում, որտեղ սկսվում է Լաչինի միջանցքը: Բայց մեր պատասխանը միանշանակ ու բավականին հրապարակային է. Լաչինի միջանցքի արգելափակումից անմիջապես հետո այս դիրքորոշումը հնչեցվել է, եւ այն մնում է նույնը. Լաչինի միջանցքի կարգավորումները բանակցված են, ստորագրված են, այդ թվում՝ Ադրբեջանի նախագահի կողմից, ես խոսում եմ նոյեմբերի 9-ի փաստաթղթի մասին: Լաչինի միջանցքի կարգավորումների վերաբանակցում, ընդ որում՝ կրկին ուժի գործադրման արդյունքում եւ նոր ուժի գործադրման սպառնալիքով, մեզ համար ակնհայտորեն ընդունելի չէ եւ չի կարող ընդունելի լուծում լինել»,-ասաց Միրզոյանը: Անդրադառնալով դիտարկմանը, թե Ադրբեջանը Հայաստանից պահանջում է «Զանգեզուրի միջանցքը»՝ Լաչինը բացելու դիմաց, ԱԳ նախարարը հավելեց՝ վերլուծելիս կարելի է տեսնել ադրբեջանական ակնկալիքը՝ բացել Լաչինի միջանցքը մեկ այլ համարժեք միջանցք ստանալու շուրջ: Այս նարատիվը նոր չէ, եւ հայկական կողմի դիրքորոշումն էլ դրա կապակցությամբ նոր չի հնչեցվում: «Մենք ունենք Լաչինի միջանցք, որը, ի դեպ, նույնիսկ մինչեւ վերջին պատերազմը ողջ բանակցային գործընթացում առանձնացվել է որպես հումանիտար միջանցք՝ հաշվի առնելով, որ ԼՂ հայությունն ամբողջությամբ շրջափակված է Ադրբեջանի կողմից, եւ միակ ճանապարհը՝ աշխարհին ու Հայաստանին կապող, հենց Լաչինի միջանցքն է: Այսինքն՝ ի սկզբանե կարեւորվել է միջանցքի գոյությունը: Եվ բոլորը, այդ թվում՝ Ադրբեջանը, դա ընդունել են, դա նաեւ արտացոլված է նոյեմբերի 9-ի փաստաթղթում, դրանում եւս հստակ ամրագրված է Լաչինի միջանցքը»,- ասաց Միրզոյանը: Իսկ ինչ վերաբերում է տարածաշրջանի մյուս ենթակառուցվածքների ապաշրջափակմանը, որի շուրջ պայմանավորվածություններ կան եւ՛ նոյեմբերի 9-ի փաստաթղթում, եւ՛ 2021-ի հունվարի 11-ի փաստաթղթում, հայկական կողմի դիրքորոշումը կրկին նույնն է ու շատ կառուցողական: Հայկական կողմը բացառում է, չի ողջունում նոր ուժի կիրառմամբ սպառնալիքների ներքո եղած պայմանավորվածությունները փոխել կամ մի կողմի շահերի հաշվին զիջումներ կորզելու ագրեսիվ քաղաքականությունը, որն արտահայտված է նաեւ ադրբեջանական կողմի հայտարարություններում:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

Փետրվարի 21-ին Արաբական Միացյալ Էմիրություններ կատարած աշխատանքային այցի շրջանակում ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հանդիպել է ԱՄԷ պաշտպանության պետնախարար Մոհամմադ Ահմադ ալ Բովարդիի հետ:

Նշվում է, որ հանդիպմանը մասնակցել է նաեւ ՀՀ ԲՏԱ նախարար Ռոբերտ Խաչատրյանը:

Քննարկվել են ՀՀ եւ ԱՄԷ միջեւ ռազմական եւ ռազմատեխնիկական համագործակցության ներկա ընթացքն ու զարգացման հեռանկարները:

Հանդիպման ավարտին պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը ԱՄԷ պաշտպանության պետնախարարին հրավիրել է Հայաստանի Հանրապետություն:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՆ ԱՔԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունել է Եվրախորհրդարանի ֆրանսիացի պատգամավորներ, ԵԽ-ում Արցախի հետ բարեկամության խմբի համանախագահներ Սիլվի Գիյոմիի եւ Ֆրանսուա Ալֆոնսի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՅԴ Հայ դատի եվրոպական գրասենյակի նախագահ Գասպար Կարապետյանի:

Զրույցի ընթացքում ԵԽ պատգամավորները, դատապարտելով ադրբեջանական ոտնձգությունները պատերազմի եւ հետպատերազմյան շրջանում, Նորին Սրբությանը վստահեցրել են, որ շարունակելու են եվրոպական կառույցներում իրենց աջակցությունն ու զորակցությունը բերել Հայաստանին եւ արցախահայությանը:

ՀՐԱԴԱԴԱՐԻ ԽԱԽՏՈՒՄ

Փետրվարի 21-ին Ադրբեջանի ՋՈՒ ստորաբաժանումները շփման գծի հյուսիսային եւ արեւելյան ուղղություններով խախտել են հրադադարը՝ կիրառելով հրաձգային զինատեսակներ: Հայկական կողմում տուժածներ չկան: Հրադադարի խախտման մասին հաղորդվել է ՌԴ խաղաղապահ զորակազմի հրամանատարությանը:

Ինչպես հայտնեցին Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությունից, ներկայումս իրավիճակը շփման գծում հարաբերականորեն կայուն է:

«Միեւնույն ժամանակ, Ադրբեջանի ՊՆ տարածած հաղորդագրությունը՝ այն մասին, թե, իբր, ՊԲ ստորաբաժանումները փետրվարի 21-ի ժամը 20:45-ից փետրվարի 22-ի ժամը 01:20-ն ընկած ժամանակահատվածում կրակ են բացել Արցախի Հանրապետության Շուշիի, Մարտունու, եւ Քարվաճառի շրջանների օկուպացված տարածքներում տեղակայված ադրբեջանական դիրքերի ուղղությամբ, հերթական ապատեղեկատվությունն է»,- ասված է հաղորդագրության մեջ:

Երեկ այս դեպքի մասին արդեն հայտնել էր ՌԴ պաշտպանության նախարարությունը: Նշվել էր, թե այդ փաստով ռուսական խաղաղապահ զորախմբի հրամանատարությունը ադրբեջանական եւ հայկական կողմերի հետ հետաքննություն է անցկացնում:

Հաղորդվում է նաեւ, որ ռուս խաղաղապահները շարունակում են Ստեփանակերտ-Գորիս ճանապարհի անարգել երթեւեկությունը վերականգնելու վերաբերյալ բանակցային գործընթացը:

«Մարտակերտի, Մարտունու, Շուշիի շրջաններում եւ Լաչինի միջանցքում պարեկություն է իրականացվել չորս երթուղիներով: Մարդասիրական բեռներով շարասյանը ուղեկցել են Գորիս-Ստեփանակերտ երթուղով»,- հայտնում է ՌԴ ՊՆ-ն:

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻՑ ՄԵԿԸ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում շարունակվում է 2020 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարության, Ազգային ժողովի շենքերում եւ պետական նշանակության այլ օբյեկտներում ու հասարակական վայրերում բռնություն գործադրելով, ջարդ իրականացնելով, գույք ոչնչացնելով, վնասելով կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրելով արտահայտված զանգվածային անկարգություններ կազմակերպելու, դրանց մասնակցելու, պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության փորձի եւ այլ դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

ԱԱԾ-ից հայտնում են, որ քրեական վարույթի շրջանակներում կատարված լայնածավալ քննչական եւ վարութային այլ գործողությունների, ինչպես նաեւ ՀՀ ԱԱԾ օպերատիվ ստորաբաժանումների կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է զանգվածային անկարգությունների ընթացքում ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանին սպանելու փորձ կատարած անձանցից մեկի ինքնությունը, որը ձերբակալվել է:

Մասնավորապես, Թ. Ա.-ն, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի եւ, դրանով պայմանավորված, նույն օրը՝Հայաստանի Հանրապետությունում եւ Արցախի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության պայմաններում 2020 թվականի նոյեմբերի 10-ին պատերազմը դադարեցնելու եւ Արցախի Հանրապետության վերահսկողության ներքո գտնվող մի շարք տարածքներ Ադրբեջանի Հանրապետության վերահսկողությանը հանձնելու մասին Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ ձեռք բերված համաձայնության վերաբերյալ հայտարարությունը զանգվածային լրատվության միջոցներում հրապարակվելուց հետո, տեղեկանալով, որ մայրաքաղաք Երեւանում գտնվող ՀՀ կառավարության, Ազգային ժողովի վարչական շենքերի եւ ՀՀ վարչապետին հատկացված կեցավայրի մոտ, դրանց ներսում զանգվածային անկարգություններ են կատարվում, դրանց մասնակցելու նպատակով գնացել է Երեւան քաղաքի Դեմիրճյան եւ Պռոշյան փողոցների խաչմերուկ, որտեղ էլ, տեսնելով, որ ավտոմեքենայում խցանման մեջ է գտնվում ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանը, տեղում միացել ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի նկատմամբ բռնություն գործադրող զանգվածային անկարգությունների մասնակիցներին, ճեղքելով վերջիններիս շարքերը՝ մոտեցել է արդեն իսկ գետնին ընկած Արարատ Միրզոյանին եւ վերջինիս պետական գործունեությունը դադարեցնելու նպատակով, նրան սպանելու դիտավորությամբ այլոց հետ միասին ոտքերով հարվածներ է հասցրել Արարատ Միրզոյանի գլխին եւ մարմնի տարբեր մասերին, ինչի հետեւանքով վերջինիս պատճառվել են դիմային գանգի ոսկրերի բազմակի կոտրվածքներ եւ այլ վնասվածքների ձեւով մարմնական վնասվածքներ, եւ Արարատ Միրզոյանը կորցրել է գիտակցությունը:

Թ. Ա.-ի դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը նրա կամքից անկախ հանգամանքներով չի իրագործվել, քանի որ Արարատ Միրզոյանի անվտանգությունն ապահովող ՀՀ ԱԱԾ ՊՊԾ աշխատակիցների միջամտության արդյունքում վերջինս տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն եւ ստացել համապատասխան բուժօգնություն:

Թ. Ա.-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով հարուցվել է հանրային քրեական հետապնդում, եւ միջնորդություն է ներկայացվել դատարան վերջինիս նկատմամբ երկու ամիս ժամկետով կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար, որը բավարարվել է:

Քրեական վարույթով շարունակվում են ձեռնարկվել ծավալուն եւ տարաբնույթ օպերատիվ-հետախուզական եւ քննչական ու վարութային այլ գործողություններ՝ կատարված հանցագործությունների ամբողջական պատկերի բացահայտման, դեպքերի հետ առնչություն ունեցած այլ անձանց ինքնությունները պարզելու, նրանց նկատմամբ հանրային քրեական հետապնդումներ հարուցելու եւ արդյունքում քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքներն արդյունավետ կենսագործելու ուղղությամբ:

ԼՈՒՐԵՐ

ՏՆՕՐԵՆԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

«Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած ողբերգական պայթյունից մոտ 7 ամիս անց ձերբակալվել է առեւտրի կենտրոնի տնօրեն Իրինա Մադաթովան: ArmLur.am-ի տեղեկությունը հաստատել են Գլխավոր դատախազությունից. թե ինչի համար է մեղադրվում տնօրենը, դեռ չեն մանրամասնում:

Հիշեցնենք՝ «Սուրմալու» առեւտրի կենտրոնում 2022թ.-ի օգոստոսի 14-ին տեղի ունեցած պայթյունը 16 մարդու կյանք է խլել:

Պայթյունի հետեւանքով 60-ից ավելի քաղաքացիներ մարմնական տարբեր աստիճանի վնասվածքներ էին ստացել: Քրեական վարույթի շրջանակում մեղադրյալի կարգավիճակ ունի 4 անձ՝ առեւտրի կենտրոնի վարձակալներն ու փոխտնօրենը: Փոխտնօրենն ու պահեստի վարձակալը մեղադրվում են Հրդեհային անվտանգության կանոնները կամ պահանջները խախտելու համար, ինչն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետեւանք (ՀՀ քրեական օրենսգրքի 357-րդ հոդվածի 2-րդ մաս): Պահեստը շահագործողները մեղադրվում են անզգուշությամբ երկու կամ ավելի անձի կյանքից զրկելու համար (ՀՀ ՀՀ քրեական օրենսգրքի 165-րդ հոդվածի 2-րդ մաս):

ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԻ ՏԵՍԱԴԱՀՏՈՒՄ

Հակակոռուպցիոն դատարանը վարույթ է ընդունել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ 29-րդ հայցադիմումը:

Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ «Փարկինգ սիթի սերվիս» ՓԲ ընկերության տնօրեն Վ.Հ.-ից եւ վերջինիս փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- չորս անշարժ գույք, որոնցից երեքը՝ Երեւան քաղաքում, մեկը՝ Կոտայքի մարզում, իսկ անհնարինության դեպքում՝դրանց միջին շուկայական արժեքները՝ 324 միլիոն 452 հազար 500 դրամ, մեկ շարժական գույք, իսկ անհնարինության դեպքում՝ դրա միջին շուկայական արժեքը, մեկ իրավաբանական անձում մասնակցության իրավունք,
- 17 մլն 771 հազար 372 դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, փոխանցվել է բարեխիղճ ձեռքբերողի, կամ անհնար է նույնականացնել եւ բռնագանձել,
- 107 մլն դրամ եւ 140 հազար ԱՄՆ դոլար ներդրված ավանդ,
- 27 մլն 435 հազար 443 դրամ՝ որպես ստացված ապօրինի եկամուտների եւ միջոցների մնացորդ:

ԼՈՒՐԵՐ

ԳՈՐԾԱՐՔ՝ ԿԵՂԾ ԹՂԹԱԴՐԱՄՈՎ

Փետրվարի 21-ին՝ ժամը 04:15-ին, Գյումրու Երեւանյան խճուղու բենզալցակայանի լիցքավորողը հաղորդում էր տվել, որ ժամը 03:25-ի սահմաններում անծանոթ տղամարդը «Մերսեդես» մակնիշի իր մեքենան 5000 դրամի բենզին էր լիցքավորել, ապա ստանալով 20.000 դրամի մանրը՝ հեռացել էր: Ինքը հետո նկատել էր, որ 20.000 դրամը կեղծ է:

Ոստիկանության Կումայրիի բաժնի քրեական հետախույզները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ժամը 19:10-ին Արթիկ քաղաքի Գորկու փողոցում հայտնաբերել, ձերբակալել եւ ոստիկանության Կումայրիի բաժին են տեղափոխել Անուշավան գյուղի 29-ամյա բնակչին, նաեւ բաժին են հրավիրել Հոռոմ գյուղի 17-ամյա մի բնակչի: Բաժնում 29-ամյա երիտասարդը խոստովանել է, որ 20.000 կեղծ թղթադրամը բենզալցակայանում ինքն է իրացրել:

Կազմված փաստաթղթերը եւ երիտասարդները ներկայացվել են Շիրակի մարզային քննչական վարչություն: Կատարվում է նախաքննություն:

ԳՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

Ոստիկանության Սիսիանի բաժնում հաղորդում տված կինը հայտնել էր, որ փետրվարի 19-ին Տոլորս գյուղի իր տան դռան կողպեքի օղակը հանել, մտել էին ներս եւ գողացել գազի բալոն ու պայուսակ, որի մեջ կային փաստաթղթեր ու փող:

Ոստիկանությունից հայտնում են, որ մեկնել էր բաժնի օպերատիվ խումբը, կատարել անհրաժեշտ գործողություններ:

Սիսիանի քրեական հետախույզների իրականացրած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացվեց հավաստի տեղեկություն, որ գողությունն արել էր Սիսիան քաղաքի 41-ամյա բնակիչը:

Նա փետրվարի 20-ին հայտնաբերվեց եւ ներկայացվեց դեպքի նախաքննությունը վարող մարմին, որտեղ խոստովանեց արարքը:

Հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 21-ից 22-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 57 դեպք:*

ՄԱՐԶ

ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ԹՈՒՆԵԼԸ ԿՎԵՐԱՆՈՐՈԳՎԻ

Կառավարության փետրվարի 16-ի նիստում վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Ծովագյուղի, Լոռու մարզի Պուշկինոյի եւ Սպիտակի թունելները կբերվեն ժամանակակից տեսքի՝ հավելելով, որ թեեւ դրանցում որոշ լուսավորման ու վերականգնման աշխատանքներ են կատարվել, բայց ընդհանուր տեսքը «միջնադարյան վիճակ» է հիշեցնում: Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Պայմանավորվել ենք, որ Ստեփանավանի, Ծովագյուղի ու Սպիտակի թունելները պետք է բերենք ամենաժամանակակից տեսքի. ասենք, այլ երկրներում որ թունել ես մտնում, Թումանյանի ասած, «լիս աշխարհ» ես ընկնում, իսկ մեզ մոտ որ թունել ես մտնում, ոնց որ քավարանի վերջի էտապը լինի»: 2022 թվականի ամռանից 28 ամիս ժամկետով Դիլիջան-Սեւան ավտոմոբիլային թունելի սպասարկումը իրականացնում է «Բարեկարգ տանիք» ՍՊԸ-ն, որը մրցույթով է շահել այդ իրավունքը: Այդ ընկերության տնօրեն Հայկ Լաբոյանին հարցրի, թե առաջիկայում Դիլիջան-Սեւան թունելի լուսավորության ցանցի հզորացման նպատակով ինչ աշխատանքներ են կատարվելու, եւ պետական բյուջեից ինչքան գումար է նախատեսված այդ նպատակով: Նա հայտնեց, որ այժմ այդ նպատակով գումարներ հատկացված չեն, լուսավորության ցանցի հզորացման աշխատանքներ նախատեսված չեն, ընթանում է թունելի ընթացիկ սպասարկման գործընթաց: Ընկերության տնօրենն ասաց, որ 2024 թվականի դեկտեմբերին թունելում նախատեսվում են վերանորոգման աշխատանքներ, որի պատճառով թունելը որոշ ժամանակ կփակվի: «Բարեկարգ տանիք» ՍՊԸ-ն, ըստ պայմանագրի, Դիլիջան-Սեւան ավտոմոբիլային թունելը կսպասարկի մինչ 2024թ. դեկտեմբեր՝ մինչեւ վերանորոգման աշխատանքների սկիզբը:

ՊԱԿԱՍ ՈՒՆԵՆ

Ըստ կառավարության հաստատած չափորոշչի՝ բժշկական շտապ օգնության բրիգադների ձեւավորումն իրականացվում է յուրաքանչյուր 20 հազար բնակչին մեկ բրիգադ սկզբունքով: Տավուշի մարզկենտրոն Իջեւան քաղաքն ունի ավելի քան 20 հազար բնակչություն: Իջեւան համայնքը ներառում է համանուն քաղաքը եւ 18 գյուղեր, համայնքն ունի 47 հազար բնակիչ: Իջեւանի բժշկական կենտրոնում գործում է շտապ օգնության մեկ բրիգադ, որը չի բավարարում: Լինում են դեպքեր, երբ հիվանդները կամ նրանց հարազատները կանչ են կատարում շտապ օգնության ծառայություն, սակայն այդ ժամանակ Իջեւանի ԲԿ-ի շտապ օգնության մեքենան կանչով այլ հիվանդի է սպասարկում: Այդ դեպքում բնակիչները իրենց ավտոտրանսպորտով կամ տաքսի ավտոմեքենայով են կատարում հիվանդի տեղափոխումը Իջեւանի բժշկական կենտրոն: Իջեւանի բժշկական կենտրոնը շտապ օգնության ավտոմեքենաների պակաս չունի, անհրաժեշտ է միայն համալրել կենտրոնի շտապ օգնության բժշկական անձնակազմը: ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր, Իջեւան քաղաքի բնակիչ Գառնիկ Դանիելյանը բարձրացրել է Իջեւան համայնքում շտապ օգնության բրիգադի թվի ավելացման խնդիրը:

ՌՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՐՑԱԽԻ ԱԳՆ

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է

2023 թ. փետրվարի 18-ին կայացած Մյունխենի անվտանգության համաժողովի ժամանակ Ադրբեջանի նախագահն արել է մի շարք հայտարարություններ՝ միտված Արցախի ժողովրդի դեմ վարվող հանցավոր քաղաքականության քողարկմանը եւ պատճառահետեւանքային կապերի խախտման միջոցով ադրբեջանաղարաբաղյան հակամարտության էության խեղաթյուրմանը. այս մասին մեկնաբանություն է տարածել Արցախի ԱԳՆ-ն:

ԱԳՆ մեկնաբանության մեջ նաեւ ասվում է. «Մասնավորապես, Ադրբեջանի նախագահը հերթական անգամ փորձել է հերքել Արցախի շրջափակման ակնհայտ փաստը, որի առկայությունը հաստատվում է միջազգային հանրության կողմից, բացառությամբ Ադրբեջանի: Որպես իբր ապացույց՝ տվյալներ են բերվել՝ առ այն, որ շրջափակման ամբողջ ընթացքում միջանցքով անցել է ռուսական խաղաղապահ զորակազմին եւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեին պատկանող 2500 մեքենա, ինչպես նաեւ ԿԽՄԿ միջոցով Հայաստանի հիվանդանոցներ է տարհանվել 100 բուժառու: Ներկայացված տվյալները Բաքվի պնդումների ճիշտ հակառակն են ապացուցում: Շրջափակման 73 օրվա ընթացքում Լաչինի միջանցքով ավելի քիչ մեքենաներ են անցել, քան շրջափակումից առաջ՝ երեք օրվա ընթացքում: Լաչինի միջանցքով անցած բոլոր մեքենաները պատկանել են կա՛մ ռուսական խաղաղապահ զորակազմին, կա՛մ ԿԽՄԿ-ին: Արցախի Հանրապետության քաղաքացիներին, պետական կառույցներին պատկանող կամ առեւտրային փոխադրումներ իրականացնող որեւէ մեքենա Լաչինի միջանցքով չի կարողանում անցնել:

Ծանր հիվանդների տեղափոխումը Երեւան հնարավոր է միայն ԿԽՄԿ-ի միջոցով, ինչը եւս մեկ անգամ վկայում է Լաչինի միջանցքով ազատ երթեւեկության բացակայության մասին: Ավելին՝ շրջափակման սկզբում առնվազն մեկ ծանր հիվանդ է մահացել հետագա բուժման նպատակով շտապ Երեւան տեղափոխելու անհնարինության պատճառով: Այն փաստը, որ Արցախի Հանրապետության բազմաթիվ քաղաքացիներ չեն կարողանում վերադառնալ Արցախ, հարյուրավոր կիսված ընտանիքներ՝ վերամիավորվել, Ադրբեջանի կողմից շրջափակման առկայության եւս մեկ ապացույց է:

Հատկանշական է, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հետ եռակողմ հանդիպումից հետո ադրբեջանցի լրագրողների հետ զրույցում Ադրբեջանի նախագահը հայտարարել է Լաչինի միջանցքում վերահսկիչ անցակետ տեղադրելու Բաքվի առաջարկության մասին: Նրա խոսքերից ակնհայտ է դառնում, որ Բաքուն այդ ծրագրերը շրջափակման հաստատումից շատ ավելի վաղ էր մշակել:

Վերոնշյալ փաստերը համոզիչ կերպով ապացուցում են, որ, Արցախի ժողովրդի համար անտանելի կենսապայմաններ ստեղծելուց բացի, շրջափակումն ուղղված է նաեւ 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթների վերանայմանը: Ադրբեջանն ակնհայտորեն ձգտում է օրինականացնել եռակողմ հայտարարության դրույթները վերանայելու իր մտադրությունը: Այս փորձերը պետք է վճռականորեն կանխվեն տարածաշրջանում հարաբերությունների կարգավորման գործընթացում ներգրավված բոլոր դերակատարների կողմից: Լաչինի միջանցքով ազատ տեղաշարժը պետք է ամբողջովին վերականգնվի՝ համաձայն 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության, առանց որեւէ նախապայմանի:

Պաշտոնական Ստեփանակերտի համար բացարձակապես անընդունելի են Ադրբեջանի՝ Արցախի ներքաղաքական կյանքին միջամտելու փորձերը, ինչպես նաեւ Ստեփանակերտի եւ Բաքվի միջեւ երկխոսության տեսլականը: Այդ կապակցությամբ եւս մեկ անգամ ընդգծում ենք, որ ադրբեջանաղարաբաղյան հակամարտության համապարփակ կարգավորումը պետք է իրականացվի բանակցությունների միջոցով, որոնք կապահովեն կողմերի իրավահավասարություն եւ չեն պարունակի բանակցային գործընթացի արդյունքը կանխորոշող պայմաններ: Այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում վերականգնել միջազգային միջնորդական ձեւաչափը՝ որպես խաղաղ գործընթացի անշրջելիության լրացուցիչ երաշխիք: Կրկին շեշտում ենք, որ Ադրբեջանի կողմից ուժի եւ ուժի սպառնալիքի անօրինական կիրառման արդյունքները չեն կարող ելակետ լինել խաղաղության, կայունության եւ անվտանգության հաստատման ճանապարհին»:

ԼՈՒՐԵՐ

ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉ

Հայաստանի պաշտպանության նախարարությունն ամառային զորակոչ է հայտարարելու: Այս մասին որոշման նախագիծն արդեն շրջանառության մեջ է դրվել: Մեզ հայտնի դարձավ, որ 2023 թվականի ապրիլի 10-ից մինչեւ հուլիսի 31-ը ներառյալ հայտարարվելու է արական սեռի այն քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական եւ այլընտրանքային ծառայությունների ամառային զորակոչը, որոնց 18 տարին լրանում է մինչեւ այս տարվա հունիսի 30-ը ներառյալ, ինչպես նաեւ այն քաղաքացիների, որոնց շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նախկինում տրված տարկետումը դադարում է մինչեւ 2023 թվականի հունիսի 30-ը ներառյալ: Բացի այս, ամառային զորակոչի շրջանակներում մինչեւ հուլիսի 31-ը ներառյալ կզորացրվեն օրենքով սահմանված ժամկետում շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային զինվորական ծառայություն անցած զինծառայողները:

ՍՅՈՒՆԵ ՀԱՄԱԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔՆ ԱՃՈՒՄ Է

2023թ. հունվարի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 222.9 մլրդ ՀՀ դրամ: Armlur.am-ը տեղեկացավ, որ այն 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ աճել է 0.9%-ով, իսկ 2022թ? հունվարի 31-ի նկատմամբ նվազել է 5.7%-ով, 2021 թվականի հունվարի 31-ի նկատմամբ աճել է 1.5%-ով: ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրիլիոն 1.6 մլրդ ՀՀ դրամ՝ նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.8%-ով, 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 5.9%-ով, իսկ 2021թ. հունվարի 31-ի նկատմամբ աճելով 2.6%-ով: ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 221.3 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 8.3%-ով, նվազելով 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ 2.5%-ով, իսկ 2021թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 2,6%-ով: ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 10 մլրդ 667.1 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.3%-ով, 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 14,9%-ով, իսկ 2021թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 32.9%-ով: Հայաստանի կառավարության պետական պարտքը 2020 թվականից հատել է կարմիր գծի շեմն ու խախտել հարկաբյուջետային ոսկե կանոնը՝ գերազանցելով ՀՆԱ-ի նկատմամբ 60%-ի շեմը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ՃՏՊ. 15 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ի փոփոխություն «Ժողովուրդ» օրաթերթի 23.12.2022թ. թիվ 186 (2666) համարի 7-րդ էջում տպագրված «Հրապարակային ծանուցման» եւ 10.01.2023թ. թիվ 1 (2667) համարի 7-րդ էջում տպագրված «Հրապարակային ծանուցման փոփոխության»՝ տեղեկացնում ենք, որ «Ակսոն» ԱՀ բորսայի հարթակում (ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31) «Բիէսթի» ՍՊԸ-ի եւ «Ակսոն» ԱՀ բորսայի կողմից կազմակերպված «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին գրավի իրավունքով պատկանող լոտերի աճուրդային փուլերը շարունակվելու են 27.02.2023թ.-ից, եւ դրանք սակարկվելու են որպես առանձին միավորներ:

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ներկայացնում է 2023 թվականի փետրվարի 1-ից 15-ն ընկած ժամանակահատվածում ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության իրականացրած հարկային իրավախախտումների կանխման, խափանման եւ բացահայտման ուղղությամբ համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները:

7 դեպքով արձանագրվել է առանց համապատասխան ուղեկցող փաստաթղթերի՝ ընդհանուր 728.5 հազար ՀՀ դրամի ՀՀ հարկային օրենսգրքի պահանջների խախտումով ապրանքների մատակարարում եւ տեղափոխում, հնարավոր տուգանքի գումարը կազմում է 5 մլն ՀՀ դրամ: Ներկայացվում են առանց համապատասխան հաշվարկային փաստաթղթեր դուրս գրելու ապրանքների տեղափոխման կամ մատակարարման դեպքերը:

6 դեպքով կազմվել են ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ արձանագրություններ: Ապօրինի ձեռնարկատիրական եկամտի չափը կազմել է 51.287 մլն ՀՀ դրամ: Հնարավոր տուգանքի գումարը կազմում է 27.310 մլն ՀՀ դրամ: Ներկայացվում են ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքերը:

4 դեպքով արձանագրվել են լիցենզավորման կամ ծանուցման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի կամ առանց ծանուցման իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու խախտումներ: Արձանագրված խախտումների գումարը կազմում է 150.595 մլն ՀՀ դրամ: Ներկայացվում են լիցենզավորման կամ ծանուցման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի կամ առանց ծանուցման իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու դեպքերը:

ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ ԵՆ

ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը տեղեկացնում է օրենսդրական նոր կարգավորումների մասին:

Ըստ այդմ՝ անազատ կամ կիսազատ պայմաններում վայրի կենդանիներ պահող իրավաբանական կամ ֆիզիկական անձինք (անկախ տվյալ վայրի կենդանու ձեռքբերումը հաստատող փաստաթղթի առկայությունից) մինչեւ սույն թվականի ապրիլի 1-ը պարտավոր են դիմել լիազոր մարմին իրենց մոտ պահվող վայրի կենդանիների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով՝ կարգի հաստատումից հետո դրանց պահման թույլտվություն ստանալու համար:

Նախարարությունը զգուշացնում է՝ առանց համապատասխան թույլտվության ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից անազատ եւ կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու դեպքում կիրառվում է վարչական պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

«Թույլտվությունը տրամադրում է Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհի պահպանության, պաշտպանության, վերարտադրության եւ օգտագործման բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական մարմինը: Թույլտվության տրամադրման համար հիմք է հանդիսանում մասնագիտական հանձնաժողովի կողմից տրամադրված դրական եզրակացությունը:

Թույլտվության տրամադրման գործընթացն ապահովելու նպատակով ստեղծվում է անազատ եւ կիսազատ պայմաններում պահվող վայրի կենդանիներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու թույլտվության համար մասնագիտական եզրակացություն տրամադրող հանձնաժողով (այսուհետ՝ մասնագիտական հանձնաժողով)»,- ասված է նախարարության հայտարարության մեջ:

Թույլտվությունը տրամադրվում է սույն կարգի Ձեւ N1-ին համապատասխան:

Թույլտվություն ստանալու նպատակով ֆիզիկական եւ իրավաբանական անձինք լիազորված մարմին են ներկայացնում թույլտվության տրամադրման մասին հայտ՝ համաձայն Ձեւ N2-ի:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ

Հրապարակային սակարկություններով վաճառք

«Ավտաստ Ֆուդ» ՍՊԸ-ին պատկանող՝ ստորեվ նշված շարժական եվ անշարժ գույքերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

«ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 14.03.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՈ/0888/04/21 սնանկության գործով 24.05.2021 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ստորեւ նշված շարժական եւ անշարժ գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 1 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնքի տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2480935:

Մ Մեկնարկային գին՝ 3,061,100 ՀՀ դրամ:

Լոտ 2 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սեւան, հյուսիս արեւմտյան մաս, «Իշխան» ռեստորանի հյուսիս արեւմուտք հողատարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2161076:

Մ Մեկնարկային գին՝ 2,465,887 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Աղբերք համայնք, փող. 13, հողամաս 11 բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2626848:

Մ Մեկնարկային գին՝ 1,062,882 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Անուշ Միլիտոսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Շորժա համայնք բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2140468:

Մ Մեկնարկային գին՝ 892,821 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան 3 նրբ., թիվ 24,26 հասցեում գտնվող տնամերձ հողամաս անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2290379:

Մ Մեկնարկային գին՝ 1,302,030 ՀՀ դրամ:

Լոտ 7 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 57/21 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2430110:

Մ Մեկնարկային գին՝ 3,932,663 ՀՀ դրամ:

Լոտ 9 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Արարատի Մարզ, Մասիս համայնքում գյուղնշանակության հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2183736:

Մ Մեկնարկային գին՝ 1,185,114 ՀՀ դրամ:

Լոտ 10 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված «FORD» մակնիշի, TRANZIT 2.4 TD տիպարի, 2000թ. արտադրության, 104 PP 11 պետհամարանիշով, կարմիր գույնի, բեռնատար տեսակի ավտոմեքենան (նույնացման համար՝ WF0LXXGBFLYC10424, գտնվելու վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Վերին Գետաշեն, Բ թաղամաս, 2-րդ փողոց, 12):

Մ Մեկնարկային գին՝ 1,310,001 ՀՀ դրամ:

Լոտ 11 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված «MITSUBISHI» մակնիշի, MONTERO SPORT 3.0 տիպարի, 2000թ. արտադրության, 104 LL 11 պետհամարանիշով, սեւ գույնի, ունիվերսալ տեսակի ավտոմեքենան (նույնացման համար՝ JA4LS21HXYP038422, գտնվելու վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Վերին Գետաշեն, Բ թաղամաս, 2-րդ փողոց, 12):

Մ Մեկնարկային գին՝ 903,450 ՀՀ դրամ:

Լոտ 12 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված Sharp սառնարան (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մ Մեկնարկային գին՝ 37,800 ՀՀ դրամ:

Լոտ 19 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված կաթսայատուն ընդհ. (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մ Մեկնարկային գին՝ 283,500 ՀՀ դրամ:

Լոտ 20 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված լվացման հոսքագիծ (տեխնիկական վիճակը՝ անսարք)

Մ Մեկնարկային գին՝ 252,000 ՀՀ դրամ:

Լոտ 26 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված միրգ տրորող սարք (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մ Մեկնարկային գին՝ 31,500 ՀՀ դրամ:

Լոտ 27 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված ջարդիչ (տեխնիկական վիճակը՝ անսարք)

Մ Մեկնարկային գին՝ 22,050 ՀՀ դրամ:

Լոտ 32 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված թրթուրավոր շղթա (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մ Մեկնարկային գին՝ 75,600 ՀՀ դրամ:

Լոտ 35 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված հյութ լցնող սարք (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մ Մեկնարկային գին՝ 94,500 ՀՀ դրամ:

Լոտ 36 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված լաբորատորո սարք (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մ Մեկնարկային գին՝ 31,500 ՀՀ դրամ:

Լոտ 37 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված ավտոկլավ փոքր երկու հատ (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մ Մեկնարկային գին՝ 81,900 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում են գրավի առարկաներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480102725520000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com) աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՍԿԱՆԴԱԼ

Ս. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ՝ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԵՐԳԸ ԳՈՂԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամերիկաբնակ հաղորդավարներ Միեր Բաղդասարյանը եւ Արա Ղազարյանը «Օձի լեզու» հաղորդաշարի ընթացքում անդրադարձել են երգիչ, դերասան Սարգիս Աբրահամյանին: Ըստ նրանց՝ Սարգիս Աբրահամյանի «Հեչել-հեչել» երգը գողացված է ադրբեջանցի երգչուհի Ռոյայի «Բելկեդե» երգից, որը հրապարակվել է յութուբում 7 տարի առաջ, իսկ Սարգիս Աբրահամյանի գործը հրապարակվել է 2 տարի առաջ: «Ես չունեմ երաժշտական կրթություն, բայց պլագիատն ակնհայտ է: Մենք երաժիշտներ չենք, բայց մասնագետներին ներկայացրել ենք տարբերակները, եւ նրանք եւս հակված է վարկածի, որ աշխատանքը կրկնօրինակված է»,- ասաց Արա Ղազարյանը:

ArmLur.am-ը թեմայի շուրջ զրուցել է Սարգիս Աբրահամյանի պրոդյուսեր Հարությունի հետ. «Աղմուկ բարձրացրած երգի երաժշտության հեղինակը մի մարդ է եղել, իսկ խոսքերի հեղինակը՝ այլ.. Սարգիսը ընդհանրապես այս երգի խոսքերի վրա չի աշխատել, ինքը չի գրել, մենք երկուսն էլ գնել ենք, ու իրականում էդ ժամանակ ուղղակի չէինք կարող կռահել, որ երաժշտությունը նման է ադրբեջանական ինչ-որ երգի.. Մենք արդեն խոսել ենք երաժշտության հեղինակի հետ, հիմա ճիշտ չեմ համարում ո՛չ այդ անձի անունը տալ, ո՛չ էլ ասել, թե ինչ խոսակցություն է եղել, բայց, ամեն դեպքում, ունենք այն, ինչ ունենք: Ուզում եմ ասել, որ մեր իրականության մեջ, ցավոք սրտի, շատ-շատ են նման դեպքերը, երբ մեր հայ show business-ի ներկայացուցիչները երգում են թուրքական, ադրբեջանական, արաբական մոտիվներով երգեր, կամ շատ դեպքերում լինում է երաժշտության գողություն. մենք դա ճիշտ չենք համարում, բայց ոչ մեկ ապահովագրված չէ նման դեպքերից, որովհետեւ մեծ մասամբ բոլոր երգերը արդեն կարող են նման լինել ինչ-որ մի ուրիշ ազգի երգերի, մեկը՝ շատ, մեկը՝ քիչ: Իմ նախաձեռնությամբ ես շատ ջերմ եւ դրական հեռախոսազրույց եմ ունեցել Արայի հետ, պատմել երգի ստեղծման պատմությունը, ապա հեռացրել ենք երգը youtube-ից, որն ուներ 2 միլիոն դիտում»: Մեր զրուցակցի խոսքով՝ շուտով Սարգիս Աբրահամյանը պատրաստվում է թողարկել նոր երգ՝ ռոմանս ոճում:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԽՈՇՈՐ

Ի՞ՆՉ Է ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒՄ ՌԱՖԱՅԵԼ ԵՐԱՆՈՍՅԱՆԸ

Ինչպես երեկ հայտնել էինք, դերասան Ռաֆայել Երանոսյանը Արմավիրի ճանապարհին վթարի է ենթարկվել:

«Փառք Աստծո, ինձ հետ ամեն ինչ նորմալ է, ինչպես ասում են, ինչ եղել է, ժեշտին է եղել: Կաշխատենք, էլի կգնենք, արդեն պատրաստվում ենք վաղվա ներկայացմանը: Պարզապես եթե նման բաներ չլինեն, ավելի լավ կլինի: Անկեղծ կլինեմ, երեկ մի փոքր վախի զգացողություն կար, ինչը նորմալ է, բայց արդեն լավ եմ, ոչ մի քերծվածք, ոչ մի վնասվածք չեմ ստացել, ամեն ինչ հրաշալի է»,-նշեց դերասանը:

Հիշեցնենք, որ ավելի վաղ գրել էինք, որ վթարի հետեւանքով «06»-ի վարորդին ու ուղեւորին առաջինն օգնության են հասել Toyota CRH-ի վարորդը եւ օպերատիվորեն ժամանած «Մեծամոր» բժշկական կենտրոնի շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը, որոնք տեղում առաջին բուժօգնություն են ցուցաբերել, ապա՝ տեղափոխել «Արմավիր» բժշկական կենտրոն:

Ըստ նախնական տեղեկությունների՝ վթարի մեղավորը եղել է «06»-ի վարորդը, որը դեպի Արմավիր ընթանալիս Toyota-ի վարորդի համար ստեղծել է վթարային իրավիճակ:

Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ՝ շարունակվում է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգային շրջագայությունը Միացյալ Թագավորությունում:

Արդեն իսկ կայացել է 7 համերգ. նվագախումբը կիրականացնի եւս 3 համերգ, որոնք կեզրափակվեն փետրվարի 24-ին Լոնդոնի հեղինակավոր «Քադոգան» համերգասրահում: Նշենք, որ համերգի տոմսերը սպառվել են շաբաթներ առաջ, ինչը խոսում է հայկական մշակույթի եւ հայ կատարողական արվեստի նկատմամբ մեծ հետաքրքրության մասին:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի ելույթներով տրվել է Արամ Խաչատրյանի 120-ամյակի հոբելյանական միջոցառումների մեկնարկը. Մեծ Բրիտանիայում ներկայացվող համերգային ծրագրերում առանցքային տեղ ունեն Խաչատրյանի ստեղծագործությունները, որոնք մեծ ընդունելության են արժանանում Միացյալ Թագավորության խստապահանջ ունկնդրի կողմից:

Ուշագրավ է, որ հայ մեծ կոմպոզիտորի Ջութակի կոնցերտը հնչում է բրիտանացի հայտնի ջութակահար Ջենիֆեր Փայքի կատարմամբ, որն այս կոնցերտը սովորել է հենց Միացյալ Թագավորությունում կայանալիք համերգային հյուրախաղերին ներկայացնելու նպատակով: Լեփ-լեցուն դահլիճներում նվագախմբի կատարումներն ուղեկցվում են ծափողջույններով, ինչը նվագախմբի կատարողական բարձր վարպետության վկայությունն է: Համերգներից առաջ իրականացվում են նաեւ քննարկումներ, որոնց ընթացքում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը ներկայացնում է Խաչատրյանի երաժշտական ժառանգությունը: Տպագրվել են նաեւ տեղեկատվական թերթիկներ՝ ներկայացվող ծրագրերի վերաբերյալ, որոնք համերգներից առաջ բաժանվում են ունկնդրին՝ այս ձեւաչափով եւս ներկայացնելով Արամ Խաչատրյանի կոմպոզիտորական ժառանգությունը:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբն իր մյուս հյուրախաղերի ընթացքում նույնպես աշխարհի տարբեր ծայրերում կատարելու է Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները՝ այդպիսով նշանավորելով հայ մեծ երախտավորի 120-ամյա հոբելյանը եւ հանրահռչակելով նրա երաժշտական ժառանգությունը: Միացյալ Թագավորությունում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հյուրախաղերի իրականացմանն աջակցել են նաեւ անհատ հովանավորներ եւ բարեգործական կազմակերպություններ:

● *Փետրվարի 24-ին Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնում տեղի կունենա «Փափլիկը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1500-2500 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Վթարից հետո մյուս վարորդն ընդունում է մեղքը, բայց հրաժարվում է դա անել ճՈ տեսուչների ներկայությամբ. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Գեւորգ Կիրակոսյան (64 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նման իրավիճակում անհրաժեշտ է զանգահարել այն ապահովագրական ընկերություն, որտեղ ապահովագրել եք Ձեր տրանսպորտային միջոցը, եւ մանրամասն նկարագրել, թե վթարը ինչպես է առաջացել, որից հետո լուսանկարե՛ք եւ տեսանկարահանե՛ք վթարված մեքենաները, նրանց դիրքերը վթարից հետո, վթարի վայրում առկա անիվների հետքերն ու թափված դետալները: Ձեր ահազանգի հիման վրա՝ դեպքի վայր կներկայանան Ճանապարհային ոստիկանության աշխա-տակիցները եւ կկազմեն համապատասխան արձանագրություն, որի ժամա-նակ Դուք պետք է պահանջեք, որ Ճանապարհային ոստիկանությունն իրականացնի վարչական վարույթ, բացահայտի կարգազանց վարորդին, որը լքել է դեպքի վայրը, եւ ենթարկի նրան վարչական պատասխանատվության: Միաժամանակ անհրաժեշտ է վթարի մասին իմանալուց հետո այդ մասին զանգով տեղեկացնել Ձեր ապահովագրական ընկերությանը:

ՀՀ Ճանապարհային ոստիկանություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե կրկնակի փորձաքննության եզրակացության արդյունքները եւս չգոհացնեն Ձեզ, ապա կարող եք այն վիճարկել դատական կարգով՝ ապացուցելով Ձեր անմեղությունը տեղի ունեցած վթարում: Դատարանում անհրաժեշտ է լինելու ներկայացնել ապացույցներ, որոնցով կհիմնավորվի մյուս վարորդի մեղավորությունը վթարում: Այդպիսի ապացույցներից են նաեւ վթարին ականատես վկաների ցուցմունքն-երը, վթարի վերաբերյալ տեսանյութը, վթարից հետո կատարված լուսանկարները, փորձա--գետի եզրակացությունները եւ այլն:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՀԱՐԿԱՅԻՆ

ՀԱՐՑ. Հարկայինի աշխատակիցը ցանկանում է ինձ տուգանել ՀԴՄ անդորրագիր չտալու համար, սակայն նա չի ներկայացրել ստուգման հանձնարարական. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Սերինե Հայրապետյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե հարկային մարմինը ցանկանում է վարչական պատասխանատվության ենթարկել Ձեզ՝ հայտնելով, որ Դուք ՀԴՄ կտրոն չեք տվել, ապա նա նախ պարտավոր է կազմել արձանագրություն, որում պետք է մանրամասն նշի, թե որտեղ եւ ինչ պայմաններում է պարզել թույլ տրված խախտումը, պետք է նշի, թե որ ապրանքի համար եւ ում կողմից կատարված գնման ժամանակ Ձեր կողմից չի տրվել համապատասխան անդորրագիր: Ընդ որում՝ Դուք իրավունք ունեք վարչական իրավախախտման արձանագրման ամբողջ ընթացքը տեսաձայնագրել՝ նախապես այդ մասին տեղյակ պահելով հարկային մարմնի աշխատակցին: Դուք իրավունք ունեք նաեւ չհամաձայնելու կազմված արձանագրության հետ՝ այդ մասին Ձեր բոլոր դիտողություններն ու առարկությունները գրառելով արձանագրության մեջ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե կարծում եք, որ հարկային մարմնի գործողություններում առկա են դիտավորություն եւ ուղղորդվածություն, եթե նա չարաշահում է իր լիազորությունները կամ ցուցաբերում է անպատշաճ վարքագիծ կամ արգելում է տեսաձայնագրել վարչական իրավախախտման արձանագրության կազմումը, ապա կարող եք այդ մասին ահազանգել Պետական եկամուտների կոմիտեի թեժ գիծ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Գյումրիում

Գյումրիում բացվեց Կամերային երաժշտության դահլիճը: Դահլիճը բացվել եւ գործելու է Գյումրու թիվ 4 երաժշտական դպրոցի շենքում: Դահլիճի բացման առթիվ բեմում էին Գյումրու պետական երաժշտական խմբերը, դպրոցական, միջին մասնագիտական եւ բարձրագույն երաժշտական հաստատությունների ներկայացուցիչները:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.02.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: